# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## *1995թ. մայիսի 26-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների մշակութային համագործակցության Խորհրդի ստեղծման մասին Համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին*

1995թ. մայիսի 26-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության մշակութային համագործակցության Խորհրդի ստեղծման մասին Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

### ՀՈԴՎԱԾ 1

Հաստատել Համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների Մշակութային համագործակցության Խորհրդի մասին Կանոնակարգը՝ նոր խմբագրությամբ (կցվում է):

### ՀՈԴՎԱԾ 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից նրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին ծանուցագիրն ավանդապահի ստանալուց 30 օր հետո:

### ՀՈԴՎԱԾ 3

Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո միանալու համար բաց է յուրաքանչյուր ԱՊՀ մասնակից պետության համար՝ միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին հանձնելու միջոցով:

Միացող պետության համար Արձանագրությունն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի ստանալուց 30 օր հետո:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում 2011 թ. հոկտեմբերի 18-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն Արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

*ՀԱՍՏԱՏՎԱԾ Է*
*1995թ. մայիսի 26-ի՝*
*ԱՊՀ մասնակից պետությունների*
*մշակութային համագործակցության խորհրդի ստեղծման մասին Համաձայնագրով*
*(2011 թ. հոկտեմբերի 18-ի խմբագրությամբ)*

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների Մշակութային համագործակցության խորհրդի մասին

### I. Ընդհանուր դրույթներ

1.1. Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների Մշակութային համագործակցության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) հանդիսանում է ԱՊՀ ճյուղային համագործակցության մարմին, նախանշված է համաձայնեցված համագործակցության ապահովման և իր իրավասությունների սահմաններում մշակույթի բնագավառի խնդիրների լուծման համար:

1.2. Իր գործունեության մեջ Խորհուրդն առաջնորդվում է Անկախ Պետությունների Համագործակցության Կանոնադրությամբ, ԱՊՀ շրջանակներում ընդունված պայմանագրերով ու որոշումներով և սույն Կանոնակարգով:

1.3. Խորհուրդը կոչված է կազմակերպելու և համաձայնեցնելու որոշումների կատարումը, որոնք վերաբերում են Խորհրդի՝ ԱՊՀ Պետությունների ղեկավարների խորհրդի, Կառավարությունների ղեկավարների խորհրդի, Արտաքին գործերի նախարարների խորհրդի և Տնտեսական խորհրդի կողմից ընդունված իրավասություններին:

1.4. Խորհուրդը փոխգործակցում է ԱՊՀ Գործադիր կոմիտեի, ԱՊՀ այլ մարմինների հետ, անհրաժեշտության դեպքում՝ այլ միջազգային կազմակերպությունների քարտուղարությունների, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների պետական իշխանության մարմինների հետ:

1.5. Խորհուրդն իր գործունեության մեջ հաշվետու է ԱՊՀ Կառավարության ղեկավարների խորհրդին:

1.6. Խորհրդի աշխատանքների մասին հաշվետվությունը սահմանված կարգով քննարկվում է Պետությունների ղեկավարների խորհրդի, Արտաքին գործերի նախարարների խորհրդի, ԱՊՀ Տնտեսական խորհրդի, Համագործակցության կանոնադրական և այլ մարմիններում Համագործակցության մասնակից պետությունների մշտական լիազոր ներկայացուցիչների խորհրդի, ինչպես նաև ԱՊՀ Տնտեսական խորհրդին կից Տնտեսական հարցերով հանձնաժողովի նիստերին:

1.7. Խորհուրդը ԱՊՀ Գործադիր կոմիտեին տրամադրում է ամենամյա տեղեկատվություն իր գործունեության մասին:

1.8. Խորհրդի աշխատանքային լեզուն ռուսերենն է:

### II. Խորհրդի գործառույթները

Խորհուրդն իր իրավասությունների շրջանակներում կատարում է հետևյալ գործառույթները.

2.1. ԱՊՀ մասնակից պետությունների մշակութային համագործակցության հարցերի քննարկում:

2.2. Մշակութային համագործակցության հետագա զարգացման հնարավորությունների ուսումնասիրում, ներառյալ ԱՊՀ շրջանակներում մշակութային կապեր իրականացնող պետական և հասարակական կառույցների փոխգործակցությունը, մասնակից պետությունների հետաքրքրություններին համապատասխան՝ ԱՊՀ մշակույթի ոլորտի գործընթացների և միտումների ուսումնասիրություն:

2.3. Բազմակողմ միջազգային պայմանագրերի, համալիր ծրագրերի նախագծերի և Խորհրդի իրավասությանը վերաբերող այլ հարցերով փաստաթղթերի մշակում, մշակույթի ոլորտում համատեղ միջոցառումների անցկացում:

2.4. Աջակցություն ԱՊՀ մասնակից պետությունների մշակույթի ոլորտի պետական իշխանության մարմիններին, հասարակական կազմակերպություններին մշակույթի ոլորտի համաձայնեցված գործողությունների մշակման հարցում:

## III. Խորհրդի իրավունքները

Խորհուրդն իրավունք ունի.

3.1. ԱՊՀ մասնակից պետություններից և ԱՊՀ ճյուղային համագործակցության մարմիններից սահմանված կարգով պահանջելու տեղեկատվություն իր իրավասություններին վերաբերող հարցերի շուրջ:

3.2. Սահմանված կարգով ներկայացնելու առաջարկություններ ԱՊՀ Պետությունների ղեկավարների և Կառավարությունների ղեկավարների խորհրդի քննարկմանը:

3.3. Ստեղծել մշտական և ժամանակավոր աշխատանքային խմբեր Խորհրդի իրավասություններին վերաբերող հարցերի շուրջ փաստաթղթերի նախագծեր պատրաստելու համար:

3.4. Իր իրավասությունների սահմաններում ընդունելու որոշումներ և հանձնարարականներ:

3.5. Լուծել իր իրավասությունների մեջ մտնող այլ հարցեր:

## IV. Խորհրդի ձևավորման կարգը

4.1. Խորհրդի անդամներ են հանդիսանում ԱՊՀ մասնակից պետությունների մշակույթի բնագավառի պետական իշխանության մարմինների ղեկավարները:

Խորհրդի նիստերին Խորհրդի անդամին փոխարինող անձանց ուղարկելու դեպքում նրանց լիազորությունները պետք է հաստատված լինեն գրավոր:

4.2. Յուրաքանչյուր պետություն Խորհրդում ունի մեկ ձայն:

4.3. Խորհրդի կազմի մեջ խորհրդատվական ձայնի իրավունքով մտնում են Խորհրդի Քարտուղարության ղեկավարը, ինչպես նաև ԱՊՀ Գործադիր կոմիտեի ներկայացուցիչը:

4.4. Խորհրդի նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ԱՊՀ մասնակից պետությունների մշակույթի և արվեստի գործիչների՝ միջազգային և ազգային հասարակական միավորումների ներկայացուցիչներ:

4.5. Խորհրդի նիստին կարող են մասնակցել ԱՊՀ կազմի մեջ չմտնող պետությունների ներկայացուցիչներ:

Սույն Կանոնակարգի 4.4-րդ և 4.5-րդ կետերում նշված անձանց իրավերները ու-

դարկվում են Խորհրդի նախագահի կամ, նրա հանձնարարությամբ, ԱՊՀ Գործադիր կոմիտեի կողմից:

## V. Խորհրդի աշխատանքների կազմակերպումը

5.1. Խորհրդի նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

Խորհրդի արտահերթ նիստ կարող է անցկացվել Խորհրդի ցանկացած անդամի առաջարկությամբ, եթե դրա օգտին կարտահայտվի Խորհրդի անդամների մեծամասնությունը:

5.2. Խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե ներկա են նրա անդամների առնվազն կեսը:

5.3. Խորհրդի հերթական նիստի անցկացումը որոշվում է նախորդ նիստի ընթացքում՝ Խորհրդի անդամների պայմանավորվածությամբ:

Հերթական նիստի ձևավորված օրակարգը կարող է լրացվել Խորհրդի անդամների առաջարկած այլ հարցերով:

5.4. Խորհրդի նախագահությունն իրականացվում է հաջորդաբար, ԱՊՀ յուրաքանչյուր մասնակից պետության կողմից՝ ի դեմս նրա ներկայացուցչի, ԱՊՀ մասնակից պետության անվան՝ ռուսերենի այբբենական կարգով, որպես կանոն՝ մեկ տարվա ընթացքում:

Նախորդող և հաջորդող Խորհրդի նախագահներ են հանդիսանում նրա համանախագահները: Խորհրդի նախագահի ժամանակավոր բացակայության դեպքում նրա պարտականությունները դրվում են համանախագահներից մեկի վրա:

5.5. Խորհրդի նախագահն իրականացնում է Խորհրդի աշխատանքի ընդհանուր ղեկավարումը, անցկացնում է Խորհրդի նիստերը, Խորհրդի գործունեության հետ կապված հարցերով սահմանված կարգով Խորհուրդը ներկայացնում է ԱՊՀ մարմիններում և Խորհրդի անունից ուղարկում է փաստաթղթեր, իրականացնում Խորհրդի գործունեության ապահովման հետ կապված այլ գործողություններ:

5.6. Խորհրդի որոշումներն ընդունվում են Խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Խորհրդի որոշումներն ունեն հանձնարարականի բնույթ:

Խորհրդի ցանկացած անդամ կարող է հայտարարել այս կամ այն հարցում իր ոչ հաճագրգիռ լինելու մասին, ինչը չպետք է դիտարկվի որպես խոչընդոտ որոշում ընդունելու համար: Որոշմանը չհամաձայնող Խորհրդի անդամները կարող են արտահայտել հատուկ կարծիք, որը ներառվում է նիստի արձանագրության մեջ:

Խորհրդի նիստը ձևակերպվում է արձանագրությամբ, որի մեջ ներառվում են Խորհրդի կողմից ընդունված որոշումները: Արձանագրությունն ստորագրվում է Խորհրդի նախագահի կողմից:

Խորհրդի կողմից ընդունված փաստաթղթերի հաշվառումն ու պահպանումն իրականացվում են ԱՊՀ Գործադիր կոմիտեի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից:

5.7. Անհրաժեշտության դեպքում Խորհրդի անդամները Խորհրդի կողմից հաստատված ժամկետներում Խորհրդի նախագահին տեղեկացնում են ընդունված որոշումների կատարման մասին:

5.8. Խորհրդի նիստի քննարկման նյութերը կարող են ներկայացվել ինչպես Խորհր-

դի անդամների, այնպես էլ Խորհրդի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբերի կողմից:

5.9. Առանձին հարցերի վերաբերյալ Խորհրդի որոշումները կարող են ընդունվել աշխատանքային կարգով և ներառվել Խորհրդի հերթական նիստի արձանագրության տեքստում:

## VI. Խորհրդի քարտուղարությունը

6.1. Խորհրդի Քարտուղարության գործառույթներն ընկնում են ԱՊՀ մասնակից պետության մշակույթի ոլորտի պետական իշխանության մարմնի վրա, որի ղեկավարը նախագահում է Խորհրդում՝ ԱՊՀ Գործադիր կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանման հետ համատեղ:

6.2. Խորհրդի քարտուղարության ղեկավար է հանդիսանում ԱՊՀ մասնակից պետության՝ մշակույթի ոլորտի պետական իշխանության մարմնի ներկայացուցիչը, որի ղեկավարը նախագահում է Խորհրդում, իսկ քարտուղարության ղեկավարի տեղակալ հանդիսանում է ԱՊՀ Գործադիր կոմիտեի ներկայացուցիչը:

6.3. Քարտուղարությունն իրականացնում է Խորհրդի կազմակերպչական տեխնիկական և տեղեկատվական գործունեության ապահովումը:

6.4. Քարտուղարությունը կազմակերպում է Խորհրդի հերթական նիստի անհրաժեշտ նյութերի նախապատրաստումը և ապահովում Խորհրդի անդամներին նիստի անցկացման ժամկետից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ:

## VII. Ֆինանսավորում

7.1. Խորհրդի նիստերի անցկացման հետ կապված ֆինանսավորման ծախսերն իրականացվում են ընդունող ԱՊՀ մասնակից պետության պետական իշխանության համապատասխան մարմինների հաշվին:

7.2. Խորհրդի անդամների և նիստի մասնակիցների գործուղման ծախսերն իրականացվում են ուղարկող ԱՊՀ մասնակից պետությունների պետական իշխանության մարմինների և կազմակերպությունների հաշվին:

***Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2013թ. նոյեմբերի 2-ին***